**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N 60-Ա

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2020թ. հոկտեմբերի 26-ի թիվ 07 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | — | — | — | բացակա |
| Թորոսյան Հրայր | [signature] | | | |
| Լալազարյան Կարեն | — | — | — | բացակա |
| Հարությունյան Հայկ | [signature] | | | |
| Մագթաղյան Գնել | — | — | — | բացակա |
| Մարիկյան Արմեն | — | — | — | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | [signature] | | | |
| Մուրադյան Դավիթ | [signature] | | | |
| Նալբանդյան Վահե | [signature] | | | |
| Սարգսյան Աիդա | [signature] | | | |
| Օհանյան Ստեփան | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ /Ռ.ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2020թ. հոկտեմբերի 26-ի թիվ 60 -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

26.10.2020թ. գ. Գյուլագարակ

*1. Գյուլագարակ համայնքի ավագանու 2020թ հոկտեմբերի 26-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:*

*2. Գյուլագարակ համայնքի 2020թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման մասին:*

*3. Գյուլագարակ համայնքի 2020թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:*

*4.ՀՀ Լոռու մարզի գյուլագարակ համայնքում 2020 թվականի հունիս-օգոստոս ամիսներին Լոռու մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից իրականացված արտաիերթ իրավական և մասնագիտական հսկողության ընթացքում արձանագրված թերությունների մասին*

*5. Գյուլագարակ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 22 -ի թիվ 2 -Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:*

*6. Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց Թեմին գումար փոխանցելու մասին:*

*7. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:*

*8. Գյուլագարակ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27 -ի թիվ 17 -Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:*

*9. Գյուլագարակ համայնքի տարածքում աղբահանության իրականացման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:*

*Ընթացիկ հարցեր*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ /ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N 61 -Ա

*ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Գյուլագարակ համայնքի 2020 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | – | – | – | բացակա |
| Թորոսյան Հրայր | [signature] | | | |
| Լալազարյան Կարեն | – | – | – | բացակա |
| Հարությունյան Հայկ | [signature] | | | |
| Մագթաղյան Գնել | – | – | – | բացակա |
| Մարիկյան Արմեն | – | – | – | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | [signature] | | | |
| Մուրադյան Դավիթ | [signature] | | | |
| Նալբանդյան Վահե | [signature] | | | |
| Սարգսյան Աիդա | [signature] | | | |
| Օհանյան Ստեփան | – | – | – | բացակա |

Համայնքի ղեկավարի ժ.պ՝ [signature] [stamp] /Ռ. Վարդանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N 62-Ա

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել 2020թ. տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | — | — | — |
| Թորոսյան Հրայր | [signature] | | |
| Լալազարյան Կարեն | — | — | |
| Հարությունյան Հայկ | [signature] | | — |
| Մագթաղյան Գնել | — | — | — |
| Մարիկյան Արմեն | [signature] | — | |
| Մկրտումյան Խաչատ | [signature] | | — |
| Մուրադյան Դավիթ | [signature] | | |
| Նալբանդյան Վահե | [signature] | | |
| Սարգսյան Աիդա | [signature] | | |
| Օհանյան Ստեփան | — | — | — |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ /ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 26- ի թիվ 62-Ա որոշման

# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՀԱՇԻՎ՝

**4267 հոդվածում** (կենցաղային և հանրային սննդի նյութեր) ավելացնել 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ.

## ԲՆԱԿԱՆ ԳԱԶ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**5134 հոդվածում** (նախագծահետազոտական ծախսեր) ավելացնել 580000(հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ.

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**5112 հոդվածում** (շենքերի և շինությունների շինարարություն) ավելացնել 1252318(մեկ միլիոն երկու հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր տասնութ)ՀՀ դրամ.

**5134 հոդվածում** (նախգծահետազոտական ծախսեր) պակասացնել 1825000(մեկ միլիոն ութ հարյուր քսանհինգ հազար)ՀՀ դրամ.

## ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**4241 հոդվածում** (մասնագիտական ծառայություններ) ավելացնել 46000 (քառասունվեց հազար) ՀՀ դրամ.

**5112 հոդվածում** (շենքերի և շինությունների շինարարություն) ավելացնել 1000000(մեկ միլիոն) ՀՀ դրամ.

**5134 հոդվածում** (նախագծահետազոտական ծախսեր) ավելացնել 50000(հիսուն հազար) ՀՀ դրամ.

## ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**4819 հոդվածում** (նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) ավելացնել 1000000 (մեկ միլիոն) ՀՀդրամ.

## ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻՆՔ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**4729 հոդվածում** (այլ նպաստներ բյուջեից) ավելացնել 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ.

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**4729 հոդվածում** (այլ նպաստներ բյուջեից) ավելացնել 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ.

## ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ ՆԱԽԱՀԱՇԻՎ

**4891 հոդվածում** (պահուստային միջոցներ) պակասացնել 6103318 (վեց միլիոն հարյուր երեք հազար երեք հարյուր տասնութ) ՀՀդրամ.

**Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ՝** 1057318 (մեկ միլիոն հիսունյոթ հազար երեք հարյուր տասնութ) ՀՀդրամ.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ /Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N 63 -Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ԻՐԱՎԱԿԱՆ և ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 01 /113,3/10258-2020 գրությունը՝ հունիս-օգոստոս ամիսներին իրականացված իրավական և մասնագիտական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ, ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Գյուլագարակ համայնքում իրականացված արտահերթ իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2020թ. հունիսի 26-ի թիվ 7արձանագրությունը:

2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2020թ. թիվ 7 արձանագրությանը կից հարցաշարում նշված խախտումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցը:

3.Առաջարկել Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Թամարա Գրիգորյանին՝ միջոցներ ձեռնարկել մասնագիտական և իրավական հսկողության արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (6) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | — | — | — | բացակա |
| Թորոսյան Հրայր | | | | |
| Լալազարյան Կարեն | — | — | — | բացակա |
| Հարությունյան Հայկ | | | | |
| Մագթաղյան Գնել | — | — | — | բացակա |
| Մարիկյան Արմեն | | — | — | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | | | | |
| Մուրադյան Դավիթ | | | | |
| Նալբանդյան Վահե | | | | |
| Սարգսյան Արդա | | | | |
| Օհանյան Ստեփան | — | | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ /ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի թիվ 64 - Ա

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22 -Ի ԹԻՎ 2 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Գյուլագարակ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 2-Ն որոշման հավելվածի 18-րդ կետի 3-րդ ենթակետում լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ «3.1 Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ սույն օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով»:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | — | — | — | բացակա |
| Թորոսյան Հրայր | [signature] | | | |
| Լալազարյան Կարեն | — | — | — | բացակա |
| Հարությունյան Հայկ | [signature] | | | |
| Մագթաղյան Գնել | — | — | — | բացակա |
| Մարիկյան Արմեն | — | — | — | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | [signature] | | | |
| Մուրադյան Դավիթ | [signature] | | | |
| Նալբանդյան Վահե | [signature] | | | |
| Սարգսյան Աիդա | [signature] | | | |
| Օհանյան Ստեփան | | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] /ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի թիվ 65 -Ա

### ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Գյուլագարակ համայնքի բյուջեի 4819 հոդվածից Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց Թեմին հ/հ 247170004938 << Արդշինբանկ>> ԲԲԸ-ին փոխանցել 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | – | – | – | բացակա |
| Թորոսյան Հրայր | [signature] | | | |
| Լալազարյան Կարեն | – | – | – | բացակա |
| Հարությունյան Հայկ | [signature] | | | |
| Մագթաղյան Գնել | – | – | – | բացակա |
| Մարիկյան Արմեն | – | – | – | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | [signature] | | | |
| Մուրադյան Դավիթ | [signature] | | | |
| Նալբանդյան Վահե | [signature] | | | |
| Սարգսյան Աիդա | [signature] | | | |
| Օհանյան Ստեփան | – | – | – | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ.Պ. /ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N 66 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից

ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 01 հավելվածի,

բ/ հարազատին կորցրած ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 02 հավելվածի.

գ/համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 03հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | — | — | — | բացակա |
| Թորոսյան Հրայր | | | | |
| Լալազարյան Կարեն | — | — | — | բացակա |
| Հարությունյան Հայկ | | | | |
| Մազթաղյան Գնել | — | — | — | բացակա |
| Մարիկյան Արմեն | — | — | — | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | | | | |
| Մուրադյան Դավիթ | | | | |
| Նալբանդյան Վահե | | | | |
| Սարգսյան Սիդա | | | | |
| Օհանյան Ստեփան | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ /ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված թիվ 01
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 26--ի թիվ 66-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն , Անուն | բնակավայր | Գումարի չափը/ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | *Բարսեղյան Դիանա* | Վարդաբլուր | քսան հազար |
| 2 | *Ազոյան Հասմիկ* | Վարդաբլուր | քսան հազար |
| 3 | *Ջանոյան Մարիամ* | Վարդաբլուր | քսան հազար |
| 4 | *Պողոսյան Գայանե* | Գյուլագարակ | քսան հազար |
| 5 | *Սիմոնյան Սաթենիկ* | Գյուլագարակ | քսան հազար |
| 6 | *Սաքույան Մայիս* | Գյուլագարակ | քսան հազար |
| 7 | *Նազարյան Սամվել* | Գարգառ | քսան հազար |
| 8 | *Սահակյան Լյովա* | Գարգառ | քսան հազար |
| 9 | *Խանումյան Արփյոմ* | Կուրթան | քսան հազար |
| 10 | *Հարությունյան Նարեկ* | Կուրթան | քսան հազար |
| 11 | *Սինդոյան Դավիթ* | Կուրթան | քսան հազար |
| 12 | *Ազոյան Անուշ* | Կուրթան | քսան հազար |
| 13 | *Դանելյան Արուսյակ* | Ամրակից | քսան հազար |
| 14 | *Քալաշյան Շողեր* | Ամրակից | քսան հազար |
| 15 | *Դարբինյան Ասփղիկ* | Հոբարձի | քսան հազար |
| 16 | *Մուսինյան Հայկուհի* | Հոբարձի | քսան հազար |
| 17 | *Մազթաղյան Աննա* | Պուշկինո | քսան հազար |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ | | | |

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 02
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 26-- ի թիվ 66-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն Անուն | բնակավայր | գումարի չափը/ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Այվազյան Լուսվարդ | Գյուլագարակ | երեսուն հազար |
| 2 | Շահինյան Անդրանիկ | Գյուլագարակ | երեսուն հազար |
| 3 | Նիկողոսյան Խաչիկ | Վարդաբլուր | երեսուն հազար |
| 4 | Զալինյան Ֆերդինանդ | Գարգառ | երեսուն հազար |
| 5 | Մաթևոսյան Աշոտ | Գարգառ | երեսուն հազար |
| 6 | Դարբինյան Գրիգոր | Կուրթան | երեսուն հազար |
| 7 | Նալբանդյան Ռոբերտ | Կուրթան | երեսուն հազար |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ | | | |

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 03
ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 26---ի թիվ --66---Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն Անուն | բնակավայր | գումարի չափը/ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Մկրտչյան Հայկանուշ | Գյուլագարակ | Տասնհինգ հազար |
| 2 | Թումանյան Էդվարդ | Վարդաբլուր | Հիսուն հազար |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ | | | |

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի թիվ 67 - Ա

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27 -Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդրիները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 17-Ա որոշման հավելվածի 13-րդ կետում լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ «13.1 Համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված բնակչի ընտանիքին իր որոշմամբ միանվագ հատկացնում է մեկ հարյուր հազար դրամի չափով սոցիալական օգնություն և այդ մասին հաղորդում է ներկայացնում ավագանուն առաջիկա նիստում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ(6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | — | — | — | բացակա |
| Թորոսյան Հրայր | [signature] | | | |
| Լալազարյան Կարեն | — | — | — | բացակա |
| Հարությունյան Հայկ | [signature] | | | |
| Մագթաղյան Գնել | — | — | — | բացակա |
| Մարիկյան Արմեն | — | — | — | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | [signature] | | | |
| Մուրադյան Դավիթ | [signature] | | | |
| Նալբանդյան Վահե | [signature] | | | |
| Սարգսյան Աիդա | [signature] | | | |
| Օհանյան Ստեփան | — | — | — | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ [signature] /ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N 68 -Ա

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 10-րդ և 13-րդ հոդվածներին համապատասխան, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն թիվ 01 հավելվածի:
2. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն թիվ 02 հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | – | – | – | բացակա |
| Թորոսյան Հրայր | [signature] | | | |
| Լալազարյան Կարեն | – | – | – | բացակա |
| Հարությունյան Հայկ | [signature] | | | |
| Մագթաղյան Գնել | – | – | – | բացակա |
| Մարիկյան Արմեն | – | – | – | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | [signature] | | | |
| Մուրադյան Դավիթ | [signature] | | | |
| Նալբանդյան Վահե | [signature] | | | |
| Սարգսյան Սիդա | [signature] | | | |
| Օհանյան Ստեփան | – | – | – | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2020թվականի հոկտեմբերի 26--ի թիվ 68Ա որոշման

**Կարգ**

**ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի աղբահանության իրականացման**

**Ընդհանուր դրույթներ**

1. Սույն կարգը կարգավորում է համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի ղեկավարի, ավագանու, աղբահանության կազմակերպման պատասխանատուների, համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական և ֆիզիկական անձանց, համայնքում հիմնական և ժամանակավոր բնակվողների, աղբահանության ծառայություն մատուցող անձանց վրա:

3. Աղբահանությունը՝ բնակավայրում գոյացող աղբի հավաքման, պահման, փոխադրման և աղբավայրում տեղադրման գործողությունների ամբողջականությունն է: Այն պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահպանմամբ: Աղբի հավաքման, պահման, փոխադրման և աղբավայրերի շահագործման հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

4. Աղբահանության իրականացումը պետք է հիմնված լինի հետևյալ հիմնական նպատակների և սկզբունքների վրա՝

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցում և չեզոքացում
2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովում
3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիություն և տարածքների մաքրում աղբից

**Աղբի հավաքմանը, պահմանը, փոխադրմանը և տեղադրմանը ներկայացվող պահանջներ**

5. Կենցաղային աղբը հավաքվում և պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ աղբարկղերում:

6. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած աղբամաններում կամ կոնտեյներներում կամ աղբահանության վճար վճարողի նախատեսած՝ իրեն պատկանող համապատասխան տարածքում, եթե համայնքի ավագանին այլ բան չի սահմանել:

7. Կրպակներում առևտուր իրականացնող սուբյեկտները իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում, որտեղ չեն պահեստավորում ապրանքներ, տարաներ կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

**8**. Աղբի փոխադրումը իրականացնում է «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ը՝ համաձայն աղբահանության կարգի: Աղբի փոխադրումը պետք է կազմակերպվի աղբատար փոխադրամիջոցներով, որոնց կառուցվածքը բացառում է շրջակա միջավայրի աղտոտումը: Աղբի փոխադրումը աղբարկղերից և աղբամաններից պետք է իրականացնել մինչև դրանց ամբողջությամբ լցվելը: Աղբարկղերից և աղբամաններից աղբի հեռացնելու ժամանակ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է աղբարկղերի հարակից տարածքի աղբը:Աղբահանության ժամանակ տեղափոխվում են նաև աղբակույտերը և տերևակույտերը: Դրանց այրումն արգելվում է:

**9**. Աղբը տեղադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում կամ ենթարկվում է վերամշակման: Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ: Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

Որպես համայնքի աղբավայր շահագործվում է Գյուլագարակ համայնքի Ամրակիցի վարչական շրջանում գտնվող աղբավայրը:

Աղբավայրի խնամքը՝ աղբավայրի հարթեցումը,հողով ծածկումը, մտնում է աղբահանություն իրականացնող կազմակերպության պարտականությունների մեջ:

**10**.Արգելվում է՝

1) աղբի պահելը և թափելը դրա համար չնախատեսված կամ չսահմանված վայրերում
2) աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում
3) սպառման թափոնների այրումը
4) աղբի համար նախատեսված վայրերում սատկած կենդանիների մարմինների տեղադրումը:

**11**. Աղբատար փոխադրամիջոցի թափքը ախտահանվում է աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի կողմից ամիսը 1 անգամ: Ախտահանման համար օգտագործվում է քլորակրի կամ Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգը հաստատելու մասին» N 581 որոշմամբ սահմանված կարգով ներմուծված վարակազերծիչ միջոցներով, ըստ վերջիններիս ուղեկցող հրահանգների:

**12**. «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

«ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը (մարմինը):

**13**. Կատարվել են կենցաղային աղբի մեջ պարունակվող հիմնական նյութերի ծավալների փաստացի չափում, որի արդյունքում ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են նյութերի խտությունները և կատարվել է Գյուլագարակ համայնքի տարածքում առաջացող աղբի մոտավոր հաշվարկ: Փաստացի չափումների արդյունքը ներկայացվում է աղյուսակ 1-ի տվյալներում

Աղյուսակ 1

| Կենցաղային աղբի մեջ պարունակվող հիմնական նյութեր | Խտություն կգ/ խոր.մ |
|---|---|
| Գոֆրակարտոնե արկղեր | 30 |
| Ալյումինե տարաներ | 37 |
| Պլաստիկե շշեր | 38 |
| Թուղթ | 120 |
| Ռետին | 240 |
| Ապակե տարաներ | 300 |
| Սննդի թափոններ | 280 |
| Պահածոների տարաներ | 80 |
| Պոլիէթիլենային տոպրակներ | 90 |
| **Միջին ցուցանիշ** | **135** |

Որպես Գյուլագարակ համայնքի բնակչության թվաքանակ հիմք է ընդունվել Գյուլագարակ համայնքում փաստացի բնակվող բնակչության թվաքանակը:

Համադրելով տարբեր աղբյուրներից վերցված տվյալները՝ պարզվել է, որ վերջին տասնամյակում երկրագնդի բնակչության մեկ շնչի հաշվով տարեկան առաջանում է **1.31 խորանարդ մետր կենցաղային աղբ**:

Վերը նշված տվյալների հիման վրա կատարված հաշվարկների արդյունքում պարզվել է, որ Գյուլագարակ համայնքում տարեկան առաջանում է **11610,53 խոր.մ. կենցաղային աղբ՝**

**8863 x 1.31 = 11610,53( խոր.մ)**

Ըստ աղյուսակ 1.-ի տվյալների՝ **կենցաղային աղբի միջին խտության** ցուցանիշը կազմում է **135կգ/խոր.մ:** Համայնքում տարեկան առաջանում է **3675 տոննա աղբ՝**

**11610,53 (խոր.մ) x 135(կգ/խոր.մ) = 1567421,55(կգ):**

**14. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1 հոդվածի՝ աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը, չսահմանված վայրում աղբ թափելը, աղբահանության համար անհրաժեշտ պայմաններ չապահովելը առաջացնում է՝**

1) Աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:
2) Սույն կետի 1-ին ենթակետի մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:
3) Չսահմանված և (կամ) չնախատեսված տեղերում ու վայրերում՝ աղբամուղերից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից, աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված և (կամ) նախատեսված

աղբավայրերից դուրս աղբ թափելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ քառասնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

4) Սույն կետի 3-րդ ենթակետի մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

5) Առանց աղբահանության պայմանագրի աղբը հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնել (թափելը)՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ քառասնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Սույն կետ 5-րդ ենթակետի մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

15. Գյուլագարակ համայնքի 2020 թվականի աղբահանության աշխատանքների իրականացումը կազմակերպելու և իրականացնելու նպատակով Գյուլագարակի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող Աղբատար MAZ 490343-390 մակնիշի 713LL70 պետհամարանիշի ավտոմեքենան անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ին:

Ավտոմեքենաների պահպանման և շահագործման ծախսերը թողնել Գյուլագարակի համայնքապետարանի :

16. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույց

Գյուլագարակ համայնքի վարչական տարածքից կենցաղային աղբի աղբահանությունը պետք է կատարվի համայնքի տարածքում տեղադրված աղբարկղերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբամանները և աղբարկղերը պետք է ենթարկվեն ախտահանման ամիսը 1 անգամ աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 22-ը դեկտեմբերի 2009 թվականի N25-Ն հրամանի 1-ին բաժնի 2-րդ ենթաբաժնի 15-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 4-ը հոկտեմբերի 2007 թվականի N 1161-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում կենցաղային աղբի աղբահանություն իրականացնելիս պետք է առաջնորդվել հետևյալ ժամանակացույցով.

Աղբահանությունը կատարվում է՝

- **յուրաքանչյուր երկուշաբթի՝ Կուրթան և Ամրակից բնակավայրերից՝ թիվ 1.1 և 1.7 հավելվածներում** նշված աղբարկղերից

• յուրաքանչյուր երեքշաբթի՝ Վարդաբլուր և Հոբարձի բնակավայրերից՝ թիվ 1.2 և 1.3 հավելվածներում նշված աղբարկղերից

• յուրաքանչյուր չորեքշաբթի՝ Գարգառ և Պուշկինո բնակավայրեր 1.4, 1.5 հավելվածներում ՝նշված աղբարկղերից

• յուրաքանչյուր հինգշաբթի՝ Գյուլագարակ բնակավայր 1.6 հավելվածում նշված վայրերում տեղադրված աղբարկղերից

• յուրաքանչյուր ուրբաթ՝ – Սոճուտ, Դենդրոպարկ, Ծռչնանոց, Գրիգ-Հաուս, Գազալցակայան /Գարգառ/

17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում աղբարկղերի տեղադրման վայրերը և քանակը ըստ փողոցների

| N | Աղբամանի գտնվելու վայրը | Քանակ |
|---|---|---|
| 1 | Կուրթան բնակավայր | 34 |
| | 5-րդ փողոց | 13 |
| | 9-րդ փողոց | 3 |
| | 10-րդ փողոց | 3 |
| | 11-րդ փողոց | 3 |
| | 12-րդ փողոց | 7 |
| | 2-րդ փողոց | 1 |
| | 3-րդ փողոց | 3 |
| | 4-րդ փողոց | 3 |
| 2 | Վարդաբլուր բնակավայր | 22 |
| | Կենտրոնական փողոց | 11 |
| | 5-րդ փողոց | 4 |
| | 6-րդ փողոց | 1 |
| | 4-րդ փողոց | 2 |
| | 1-ին փողոց | 2 |
| | Սարի թաղ | 2 |
| 3 | Հոբարձի բնակավայր | 14 |
| | 1-ին փողոց | 5 |
| | 3-րդ փողոց | 2 |
| | 5-րդ փողոց | 3 |
| | 11-րդ փողոց | 2 |
| | 14-րդ փողոց | 1 |
| 4 | Գարգառ բնակավայր | 22 |
| | Կենտրոնական փողոց | 11 |
| | 1-ին փողոց | 2 |
| | 2-րդ փողոց | 1 |
| | 3-րդ փողոց | 1 |
| | 4-րդ փողոց | 3 |
| | 7-րդ փողոց | 2 |
| | 10-րդ փողոց | 1 |

| | | |
|---|---|---|
| | 11-րդ փողոց | 1 |
| 5 | Ամրակից բնակավայր | 10 |
| | Կենտրոնական փողոց | 3 |
| | 1-ին փողոց | 1 |
| | 2-րդ փողոց | 1 |
| | 2-րդ փողոց 1-ին նրբ⍰ | 1 |
| | 2-րդ փողոց 2-րդ նրբ⍰ | 1 |
| | 3-րդ փողոց | 1 |
| | 4-րդ փողոց | 1 |
| | 6-րդ փողոց 2-րդ նրբ⍰ | 1 |
| 6 | Պուշկինո բնակավայր | 9 |
| | 1-ին փողոց | 3 |
| | 2-րդ փողոց | 6 |
| 7 | Գյուլագարակ բնակավայր | 34 |
| | Կենտրոնական փողոց | 4 |
| | 1-ին փողոց | 2 |
| | 2-րդ փողոց | 6 |
| | 3-րդ փողոց | 2 |
| | 5-րդ փողոց | 1 |
| | 6-րդ փողոց | 2 |
| | 7-րդ փողոց | 3 |
| | 9-րդ փողոց | 1 |
| | 13-րդ փողոց | 2 |
| | 14-րդ փողոց | 3 |
| | 15-րդ փողոց | 2 |
| | 17-րդ փողոց | 1 |
| | 18-րդ փողոց | 1 |
| | 20-րդ փողոց | 1 |
| | 22-րդ փողոց | 1 |
| | 27-րդ փողոց | 1 |
| | 32-րդ փողոց | 1 |
| | | |

**18. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքից ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և տեղափոխման թույլտվության տրամադրման պայմանների և աբահանության վճար վճարողների հաշվառման կարգ**

**Սույն կարգով սահմանվում է՝**

1. Գյուլագարակ համայնքի տարածքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու կարգը:

Թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի կողմից: Թույլտվությունը կարող է տրվել իրավաբանական անձին, անհատ ձեռնարկատերերին, շինարարական և խոշոր եզրաչափերի աղբի աղբահանության վճար վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար: Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:

Թույլտվության տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշման հիման վրա: Թույլտվություն տալու համար հայտատուից գանձվում է տեղական տուրք՝ համաձայն ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան: Տեղական տուրքի վճարումն հավաստող անդորրագրի և հայտի ստանալուն հաջորդող 3 օրվա ընթացքում հաստատված թույլտվությունը հանձնվում է հայտատուին: Թույլտվության ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, չեն համապատասխանում ավագանու կողմից հաստատված պայմաններին: Հայտը գրավոր մերժվում է մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

2. Գյուլագարակ համայնքում աղբահանության վճար վճարողներն են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային հարկ վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե իրականացվում է համայնքի կողմից:

Գյուլագարակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը, վճարի հաշվարկումը և մուտքագրումը համայնքի բյուջե կատարվում է <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքներին համապատասխան՝ համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաճափերին համապատասխան՝

Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գյուլագարակ համայնքի ղեկավարը:

Աշխատակազմի քարտուղար՝ /Թ.Գրիգորյան/

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի 26--ի թիվ 68--Ա որոշման

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում սանիտարական մաքրման սխեման**

1. ***Սանիփարական մաքրման աշխափանքներ***

Գյուլագարակ համայնքի սանիտարական մաքրումը ներառում է՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների(փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայթերի, անցումների, սիզամարգերի, կամուրջների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, անցումների և մայթերի մաքրումը ձյունից և սառույցից, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Այն իր մեջ ընդգրկում է ձեռքի և մեքենայացված տեխնոլոգիաների կիրառմամբ, համապատասխան սանիտարական նորմերի պահպանմամբ ընդհանուր օգտագործման տարածքների մաքրումը աղբից, փոշուց, տերևակույտերից, կենդանիների դիակներից՝ նպատակ ունենալով բարելավել միկրոկլիման և նվազեցնել օդի փոշոտվածության աստիճանը:

**ՀԱՇՎԱՐԿ**

**Սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներ**

Կատարվել է Գյուլագարակ համայնքի սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների փաստացի չափագրում, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալների և առաջացող աղբի մոտավոր հաշվարկ:

| ***Փողոցների,մայթերի և սիզամարգերի սանիփարական մաքրման ցանկ*** | | |
|---|---|---|
| ՀՀ | **Սանիտարական մաքրման ենթակա բնակավայրերի անվանումները** | **Սպասարկվող տարածքի մակերեսը հա** |
| *1.* | Կուրթան | 195 |
| *2.* | Վարդաբլուր | 127 |
| *3.* | Հոբարձի | 72 |
| *4.* | Գյուլագարակ | 194 |
| *5.* | Գարգառ | 164 |
| *6.* | Պուշկինո | 101 |
| *7.* | Ամրակից | 92 |

Գյուլագարակ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներից մաքրման տակ ներառված են 945 հա: Փաստացի ուսումնասիրությունների և միջինացված հաշվարկների արդյունքում պարզ է դարձել, որ ասֆալտապատ փողոցների երթևեկելի մասի՝ 0,75 մ լայնությամբ գոտիներից (հաշված եզրաքարերից), մայթերից և սիզամարգերից ընդհանուր վերցրած 1 քառ.մ.-ից հավաքվում է **0,28** կգ աղբ: Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների մաքրման հետևանքով օրական առաջացած աղբի քանակը կկազմի **13 տոննա՝**

Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների մաքրման հետևանքով տարեկան առաջացած աղբի քանակը կկազմի **4745 տոննա:**

**2. Ձյան մաքրման աշխատանքներ**

Այն իր մեջ ներառում է ընդհանուր օգտագործման փողոցների, կամուրջների մաքրումը ձյունից և սառույցից: Ձյան մաքրումը իրականացվում է ձնամաքրող տեխնիկայի միջոցով, որից հետո իրականացվում է աշխատանք՝ մաքրված տարածքների սառցակալման դեմ՝ ավազ-աղային խառնուրդով: Տարածքներից հավաքված ձյունը պետք է վերածվի թմբերի կամ կույտերի՝ մայթերին զուգահեռ:

Տրանսպորտի նորմալ երթևեկությունն ապահովելու նպատակով ձնաթմբերը պետք է կուտակվեն այնպես,որ նրանց հիմքերի լայնությունը 1,5 մետրից ավել չլինի:

Աշխատանքները պետք է կատարվեն ըստ ժամանակացույցի և հաշվարկվեն 1կմ երկարությամբ և 9մ. լայնությամբ փողոցի ձյան մաքրման հաշվարկի ձևով, որպես հաշվարկային մեկ միավոր:

Կատարվել է Գյուլագարակ համայնքի ձյան մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման ճանապարհների փաստացի չափագրում և աշխատանքների ծավալների ու գնի մոտավոր հաշվարկ:

Համայնքի տարածքում ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 116 կմ, որից 10 կմ հատվածը հանրապետական նշանակության: Ձմեռային մաքրման տակ ներառված են **41,07** կմ ավտոճանապարհներ, որոնք 10 մ լայնությամբ 1 կմ երկարությամբ հաշվարկի ձևով կկազմեն 34 կմ

***Համայնքի միջոցների հաշվին Գյուլագարակ համայնքի 2021 թվականի ձյան մաքրման աշխատանքները հանձնել Հայաստանի Հանրապետության «Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում»-ՀՈԱԿ-ին:***

Աշխատակազմի քարտուղար՝ /Թ.Գրիգորյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2020թվականի N 69 -Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Գյուլագարակ համայնքի բյուջեի 4819 հոդվածից ՀՀ Կենտրոնական Բանկ հաշվեհամար 103003240159 «Հայաստան» համահայկական հիմնադրամին փոխանցել 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Գյուլզադյան Վռամ | - | - | - | բացակա |
| Թորոսյան Հրայր | | | | |
| Լալազարյան Կարեն | - | - | - | բացակա |
| Հարությունյան Հայկ | | | | |
| Մագթաղյան Գնել | - | - | - | բացակա |
| Մարիկյան Արմեն | - | - | - | բացակա |
| Մկրտումյան Խալաթ | | | | |
| Մուրադյան Դավիթ | | | | |
| Նալբանդյան Վահե | | | | |
| Սարգսյան Արդա | | | | |
| Օհանյան Ստեփան | - | - | - | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ /Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/